



ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

13 հունիսի 2022 թվականի թիվ 86-Ա

ք. Երևան

**«ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՑԱՆՑԱՅԻՆ ՕՊԵՐԱՏՈՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 27-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՆՈՒԹՅԱՆ ԿԱԲԵԼԱՅԻՆ (ՄԱԼՈՒԽԱՅԻՆ) ՀԵՌԱՐՃԱԿՄԱՆ ԿՀ N 278
ԼԻՑԵՆԶԻԱՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասով, 58-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետով, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի 2020 թվականի սեպտեմբերի 8-ի «Ցանցային օպերատորի գործունեության լիցենզավորման կարգը և լիցենզիայի ձևը հաստատելու մասին» թիվ 96-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով և հիմք ընդունելով «ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊ ընկերության 2022 թվականի մայիսի 27-ի ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա ստանալու և 2020 թվականի ապրիլի 27-ին տրամադրված հեռուստառադիոհաճախների կաբելային (մալուխային) հեռարձակման ԿՀ N 278 լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին դիմումները՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը **որոշում է.**

Բավարարել «ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊ ընկերության դիմումները՝

1. Տրամադրել «ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊ ընկերությանը Հայաստանի Հանրապետության տարածքում ցանցային օպերատորի գործունեության լիցենզիա:

2. Ուժը կորցրած ճանաչել «ԹԻՎԻ ՍԹԵՅՇՆ» ՍՊ ընկերությանը 2020 թվականի ապրիլի 27-ին տրամադրված հեռուստառադիոհաճախների կաբելային (մալուխային) հեռարձակման ԿՀ N 278 լիցենզիան:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանը ծանուցելուց մեկ օր հետո:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Տ. ՀԱԿՈԲՅԱՆ